

Թումաս եպիսկոպոս¹⁰ Անապատէն, եւ այլ երկու եպիսկոպոսք Տաթեու¹¹, զոր ոչ ար-

վախճանեցաւ 1620ին: Իր վարքը կը պատմէ Առ. Դաւրիժեցի (էջ 266—283): Տե՛ս § 23:

¹⁰ «Թովմայ եպիսկոպոս Տաթեու, որ զկնի եղև վարդապետ եւ դնաց յերկիրն Շամախու հովուել եւ առաջնորդել ժողովրդեան աշխարհին». Առ. Դաւրիժեցի, էջ 253, հմմտ. եւ 260: Ինքն է, որ 1617ին «տէր Սարգիսի ձեռօք» կը ստանայ էջմ. 801 Հարանց վարքը եւ Ղուկաս զրջի օրինակել կու տայ նոյն թուին Վիեննայի Թ. 168 Աւետարանը (Տաշեան՝ Ցուցակ, էջ 482):

¹¹ Ասոնք են հաւանօրէն՝ Մեսրոպ եպիսկոպոս առաջնորդն Տաթեու եւ Ջաքարիա եպիսկոպոս Վայոց ձորոյ. առաջինը յաճախ կը յիշուի ժամանակակից յիշատակարաններու մէջ. յառաջ կը բերեմ Խաչատուր զրջի յիշատակարանը 1620էն. սա կ'օրինակէ Աւետարան մը «ի յերկիրն Ղափանու ի դիւղն որ կոչի Տանձէվէր, ի դուռն Ս. Ստեփանոսի... ի հայրապետութիւն սուրբ ուխտիս ի տէր Մեսրովր արեւելիսկապոսի, որ է առաջնորդ եւ քահանայապետ սուրբ ուխտիս Ստաթէի առաքելոյ վիճակին եւ թեմին: ... Յիւշեցէք զիմ վարպետն զտէր Դաւիթ եպիսկոպոսն, որ բազում աշխատանք եւ երախտիք ունի ի վերայ մեր», Աւետարանի ստացիւն է տէր Յակոբ. Ձեռ. էջմ. 293: ԶԴաւիթ զովութեամբ կը յիշէ Առ. Դաւրիժեցի (էջ 253). «Եւ Դաւիթ եպիսկոպոսն, որ ի Շամքօու ձորէն եւ ի ցեղէն իշխանաց որ Ղարամանենց կոչեն. սա եւս եկեալ եկաց ի մեծ Անապատս. եւ ապա ելեալ դնաց ի ձորն Շամքօու եւ անդ շինեաց անապատ, զոր կոչեն Ջարեքագետի անապատ, որ է բազմաթոռով եղբարց ընակութիւն, եւ յոյժ հաստատուն ամենայն կարգօք եւ սահմանօք Անապատի մինչեւ ցայսօր: Եւ ինքն Դաւիթ եպիսկոպոսն անդէն վախճանեցաւ եւ անդէն թաղեցաւ»: Զաքարիա կը յիշուի 1619ին Ղուկաս զպրէն, որ ի խնդրոյ Ղազար քահանայի եւ Սարգիս եպիսկոպոսի (պարոնտիրոջ) կ'օրինակէ Ներսէս Լամբրոնացւոյ Պատարագի Մեկնութիւնը «յերկիրն Որոտան, ի դելդս որ կոչի Գետաթաղ, ընդ հովանեաւ Ջադարոյց Ս. Աստուածածնիս», յորդորմամբ «ամենաերջանիկ քաւչապետի եւ մեծի զխոյն արհիախան տեառն Ջաքարիայի». Աճառեան, Ցուցակ հայ. ձեռագրաց Թաւրիզի, էջ 80—81. հմմտ. եւ Թովմեան,